

**ՀԱՅՈՑ ԴԷՄ ԳՈՐԾՈՒԱԾ**  
**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐԸ**  
**ԾԱՅՐԱԳՈՅՆ ԱՐԵԻԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ  
artsvi@yahoo.com

Իր աննախադեպ բնույթի պատճառով Ի. դարի հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական իրադարձությունը՝ ցեղասպանությունը, որոշակի արձագանգ է գտել նաև Հայաստանից աշխարհագրականօրեն հեռու տարածաշրջաններում: Սակաւաթիւ, սակայն ուշագրաւ տեղեկութիւններ են պահպանուել Ծայրագոյն Արեւելքի կամ Ծայրագոյն Ասիայի երկրներում հայոց դէմ գործուած եղասպանութեան արձագանգների վերաբերեալ, որ առաւելապէս վերաբերում է եղեռնից փրկուածներին ցուցաբերած մարդասիրական օգնութեանը:

Սոյն հաղորդման մէջ ի մի են բերուած այն հատուկէնտ վկայութիւնները, որոնք վերաբերում են Ծայրագոյն Ասիայի երկրներում (հիմնականում Չինաստան, Ճապոնիա, Կորէա, Ինդոնեզիա) 1910-1920ականներին հայոց ցեղասպանութեանը վերաբերող իրողութիւններին:

Հարցը մինչ այժմ արծարծել է Սիդնիի Հոլոքոսթի եւ Ցեղասպանութեան Ուսումնասիրութիւնների Հաստատութեան աշխատակից Վիգէն Բաբկէնեանը ամերիկահայ *Արմինիըն Ուիկլի* պարբերականում հրատարակած իր յօդուածներում<sup>1</sup>:

**ԻՐԱԶԵԿՈՒՄ**

Թեմայի յիշատակումը պատմաբան-բանասերի մէջ առաջին հերթին գուգորդում է ճապոնաբնակ հայ հրապարակախօս, 1920ին Ծայրագոյն Արեւելքում ՀՀ կառավարութեան կողմից պատուոյ հիւպատոս նշանակուած Դիանա Աբգարի գործունէութեանը, որը քիչ թէ շատ ծանօթ է: Քանի որ այս գործչին մենք արդէն նուիրել ենք մանրամասն ուսումնասիրութիւն<sup>2</sup>, այստեղ հակիրճ յիշենք, որ 1909ի Ադանայի կոտորածներն առիթ հանդիսացան, որպէսզի Ճապոնիայում բնակուող ծնունդով հնդկահայ առետրական գործիչ եւ գրող Աբգարը սկսի զբաղուել հրապարակախօսութեամբ եւ քաղաքագիտութեամբ: Նա իր բեղմնաւոր գրիչը ծառայեցրել է Հայ Դատի եւ հայ ժողովրդի վիճակի հանրահռչակմանը եւ լուսաբանմանը, Առաջին Համաշխարհային Պատերազմի նախօրեակին եւ տարիներին հանդէս եկել հայ ժողովրդի մասին դասախօսութիւններով, յօդուածներով, աշխատակցել

Եռլոհամայում հրատարակուող *Japan Gazette* անգլերեն պարբերականին: *Japan Gazette*ի հրատարակչութիւնը մէկը միւսի ետեւից լոյս է ընծայել Աբգարի անգլերեն գրքոյկները եւ տարածել: Իր գրաւած հասարակական բարձր դիրքի շնորհիւ Աբգարը կարողացել է ազդել 1919ին Փարիզի Խաղաղութեան Համաժողովի ճապոնական պատուիրակութեան վրայ, որպէսզի նա եւս նպաստի հայ դատի բարեյաջող լուծմանը<sup>3</sup>:

Դիանա Աբգարի գրութիւնները որոշակիօրէն կատարել են իրենց դերը, ճապոնական հանրութեանն իրազեկ դարձրել Հայոց Յեղասպանութեան իրողութեանը: Հաւանաբար հենց նրա գործունէութեան արձագանգը կարող են լինել հետեւեալ երկու փաստերը: Ճապոնացի հետազօտող, Տոկիոյի Վասեդա Համալսարանի պրոֆեսոր Եոսիյօ Սաեկիին 1916ին հրատարակած *Նեստորական Յուշարձանը Չինաստանում* աշխատութեան մէջ, յիշատակելով ԹԹ. դարի վերջին չինացի նեստորականների բնաջնջման փաստը, զուգահեռ է կատարել հայերի հետ՝ մասնաւորապէս նշելով. «Մենք բաւական համոզուած ենք, որ չինացի նեստորականների շատաւիղներն էին, որոնք անխղճօրէն կոտորուեցին չինական զինուորականների կողմից 1891 թուականին: Այդ 15 հազար չինացի Չինտան Չիաոյի հաւատացողները, որոնք սպանուեցին, անձանօթ եղբայրներն էին խեղճ հայ քրիստոնէանների, որոնք դաժանօրէն կոտորուեցին միեւնոյն ժամանակ Մերձաւոր Արեւելքում»<sup>4</sup>:

Երկրորդ օրինակը վերաբերում է 1919ին, երբ թուրքական *Թասֆիր* թերթն աշխարհի չորս կողմից ի վնաս հայոց փաստեր է հաւաքել՝ այդ առթիւ հարցաքննելով նաեւ Կ.Պոլսում գտնուող մի ճապոնացու: Վերջինս պատասխանել է. «Շատ պատմութիւններ հասկցուցին հայկական ջարդերու մասին: Չեմ կրնար պնդել թէ Թուրքերն անմեղ են: Իր պատմութիւնը ունենալու է այդ. հարկաւ դուք ալ կեցած տեղերնիդ չջարդեցիք եւ: Խառն ցեղերով երկիր մը վարելը դժուար է: Միայն ձեզի խրատ մը տամ: Եթէ չէք ուզեր որ ասկէց վերջ Եւրոպայի առջեւ ամբաստանութեան տեղի տաք, ջանացէք կարելի եղածի չափ յարմարիլ ոչ-իսլամ տարրերուն հետ»<sup>5</sup>:

Նշուած իրողութիւններն, անշուշտ, նշանակալից չեն, սակայն ապացուցում են, որ տեղեկատուական դժուարամատչելիութեան պայմաններում ճապոնացի ժողովրդի զաւակներ եւս որոշակի գաղափար են ունեցել հայութեան հետ կատարուող արհաւիրքի վերաբերեալ...

#### ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1916ից սկսած եղեռնից տուժածներին օգնութեան ձեռք են մեկնել Ծայրագոյն Արեւելքի երկրները, հիմնականում՝ տեղի հայ համայնքների

միջոցով: Ցատկապէս օժանդակութիւն է եկել Բնդոնեգիայից, որտեղ եղել է ամէնից ստուար եւ կազմակերպուած հայ համայնքը: Մասնաւորապէս Ճաւայի հայերը հանգանակել են 3500 անգլիական ոսկի: Հանգանակութեանը մասնացել են նաեւ կղզու չինացի, անգլիացի եւ հոլանդացի բնակիչները<sup>6</sup>:

Մերաստիայում Ամերիկեան Քոլէջի ուսուցիչ, ամերիկացի քարոզիչ, վերապատուելի դոկտոր Էոնեսթ Քլարք Փարթրիջը 1917ին մեկնել է Չինաստան, որտեղ քրիստոնէացած չինացիների սեղմ շրջանակում խօսել է հայկական տառապանքների մասին: Ունկնդիրներն այնքան են յուզուել, որ անմիջապէս 20 դոլար են հաւաքել, նոյնքան էլ տուել են դպրոցի աշակերտները, իսկ դպրոցի դռնապանը, որն իր ծննդավայրը վերադառնալու համար բացառիկ գումար է ստացած եղել, հայաջինջ սարսափների պատմութիւնից ազդուելով՝ այդ գումարն ամբողջովին տրամադրել է հայ տուժածներին: Այս մասին Փարթրիջը զեկուցել է 1919ին Սկիւտարի ժողովասրահում, իր հայերէն ելոյթում<sup>7</sup>:

Ուշագրաւ է նաեւ, որ 1920ին, ԱՄՆի չինացի ուսանողների ամսագրի խմբագրականներից մէկում, խօսելով չինացիների՝ իրենց հարեւանների հետ կապերի եւ առհասարակ ազգամիջեան յարաբերութիւնների մասին, աշխարհում ուժեղի եւ թոյլի, արդարի եւ անարդարի մասին, որպէս բնորոշ օրինակ բերուած են հայերը. *«Նայէք հայերին: Հազարաւոր հայեր կոտորուեցին կամ ստրկացուեցին թուրքերի կողմից: Այնտեղ նրանց հիանալի երկիրն աւերուած է դաժան թուրքերի կողմից: Բնչո՛ւ: Նրանք քրիստոնէաներ են: Նրանք չեն վիրաւորել թուրքերին: Նրանք, իհարկէ, ճիշտ են: Նրանք ունեն իրաւունք: Մակայն նրանք չունեն ուժ: Նրանք թոյլ են եւ ընկնում են թուրքերի կոռնկների առաջ: Այդպիսին է համաշխարհային փորձառութեան ողբերգութիւնը: Եւ մենք չենք կարող նախազգուշանալ»<sup>8</sup>:*

1920ին Միջագետքի Հայ Տարագրելոց Յանձնախումբը ձեռնարկել է Բաքուքայի (Իրաք) հայկական որբանոցին օգնելու նպատակով դրամ եւ միջոցներ հայթայթել եւ այդ առաքելութեամբ Հնդկաստան է գործուղել իր ատենապետ Մարտիրոս Գոյումճեանին: Միջագետքի անգլիացի կոմիսար Ա. Թ. Վիլսոնը նամակ է յղել Հնդկաստանի ղեկավար պաշտօնատարներին՝ յանձնարարելով ամէն դիւրութիւն ընծայել Գոյումճեանին: Հնդկաստանի, Բնդոնեգիայի, Հոնկոնգի, Մինգապուրի եւ Ճապոնիայի հայերի, ինչպէս նաեւ տարբեր ազգութիւնների ներկայացուցիչների առատաձեռն նուիրատուութեան շնորհիւ Գոյումճեանի առաքելութիւնը պսակուել է յաջողութեամբ: Գոյումճեանը հասել է *«մինչեւ Հնդկաստանի հեռաւոր անկիւններն ու Ուլկիանիոյ կղզիները միշտ այն յոյսով թէ աւելի մեծ գումար մը ձեռք ձգել պիտի յաջողէր եւ իրօք ալ նա կը հանգանակէր 395000 ռուփիի չափ գումար մը, մէջն ըլլալով նուիրուած հազուստեղէններ եւ Առաքել*

*Մարտինեանի նուիրատուութիւնը*<sup>9</sup>: Ուշագրաւ է, որ նուիրատուների մէջ կան նաեւ Մակասարում (Բնդունեգիա) ապրող 13 չինացիների անուններ, որոնցից տասը նուիրաբերել են 250ական ռուփի, երեքը՝ 100ական<sup>10</sup>: Հոնկոնգից Ա. Թոյթունճեանը նուիրաբերել է 50 են, Մ. Մանուկը եւ Տիգրան Գրեգորին՝ 25ական, Հարոյդ Լէթը՝ 15 են, իսկ Շանհայից (մայրցամաքային Չինաստան) տիկին Ա. Բազիլը հանգանակել է 30 են<sup>11</sup>: Ճապոնիայի Կոբէ քաղաքից հանգանակութեանը մասնակցել է ինը հոգի՝ հայ եւ օտարազգի (675 են), Եոկոհամայից՝ տաս, հայերից՝ 222 են, օտարազգիներից՝ 55 են<sup>12</sup>:

Հայ համայնքների կազմակերպած այս տարերային ջանքերին յետագայ տարիներին եկել է միանալու Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց Յանձնախմբի աւելի կանոնակարգուած գործունէութիւնը, որն ընդգրկել է նաեւ Ծայրագոյն Արեւելքի երկրները: Յայտնի է, որ 1919ին հիմնուած Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցը մասնաճիւղեր է հիմնել տարբեր երկրներում եւ աւելի քան 110 միլիոն դոլար է հանգանակել ցեղասպանութիւնից փրկուածներին օգնելու նպատակով: «*Երբ 1920ականների սկզբին Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց կոմիտէն սկսեց տարբեր երկրներում կազմակերպել այսպէս կոչուած 'Ոսկէ կանոնի' միջոցառումներ, որի ընթացքում լուսաբանում էր Մերձաւոր Արեւելքում պատերազմից տուժածների ներկայ դրութիւնը եւ հանգանակութիւններ էին կազմակերպւում նրանց օգտին, այդ երկրներից անմասն չմնացին նաեւ Չինաստանը եւ Ճապոնիան*»<sup>13</sup>: Եւ ահա, չնայած 1921ի Չինաստանի սովին, Պեկին, Գուանձօ եւ Շանհայ քաղաքներում 1922ին հիմնուել են հայերին նպաստամատոյց յանձնախմբեր: Չինաստանում ճանաչուած ամերիկացի միսիոնէր վերապատուելի Էլուուդ Ջ. Թիլքքերին դարձել է Կենտրոնական Յանձնախմբի նախագահ, որը գործել է Շանհայում: Դրանից առաջ ամերիկեան Ինդիանապոլիս քաղաքում միացեալ միջոցառում է կազմակերպուել Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց Յանձնախմբի եւ Չինաստանի Սովի Հիմնադրամի կողմից: Տիկին Աննա Ազգապետեանն իր ելոյթում ներկայացրել է Եղեռնից փրկուած գաղթական հայերի կարիքները: Նրա խօսքից խորապէս ազդուած ԱՄՆում չինական առաքելութեան ղեկավար Սաօ-Քէ (Ալֆրէդ) Ծէն նկատելի գումար է տրամադրել հայ գաղթականներին<sup>14</sup>:

Եղեռնից փրկուած հայերի նպաստամատոյց խումբ է ստեղծուել նաեւ Կորէայում: Այս երկրում Հայկական Նպաստամատոյց Յանձնախումբն ստեղծուել է ԱՄՆի հիւպատոս Միլերի կողմից: Կորէայում աւելի քան յիսուն տարի առողջապահական գործունէութիւն ծաւալած կանադացի բժշկական քարոզիչ, Թորոնթոյի Համալսարանի ուսուցչապետ Օլիւրը Ռ. Աւիսընը (1860-1956), ի թիւս այլ ամերիկացիների եւ եւրոպացիների, եղել է այդ յանձնախմբի նախագահը

(որոշ ժամանակ նրան փոխարինել է Թումրս Հոբզը<sup>15</sup>): Տեղեկացուել է, որ Սքրայի Բիչի (Կորեա) ամառային շաբաթօրեայ դպրոցում կազմակերպուել է յատուկ հայ գաղթականների օգնութեանը նուիրուած մի օր, որի ընթացքում որոշակի գումար է ժողովուել: Կորեացիները, իրենք էլ լինելով աղքատ, իրենց լուման են ներդրել հայ գաղթականների վիճակը թերեւացնելու գործում<sup>16</sup>:

Ըստ Բարկէնեանի՝ միջազգային մարդասիրական շարժմանը Ճապոնիայի մասնակցութեան պատմութեան վաղ տարիները մինչ այժմ չեն եղել առանձին ուսումնասիրութեան առարկայ: Ըստ նրա, ընդունուած է համարել, որ Ճապոնիայի առաջին յայտնի մասնակցութիւնը միջազգային մարդասիրական շարժմանը եղել է 1953ին, երբ կառավարութիւնն օժանդակել է պաղեստինցի գաղթականներին: Իսկ աւելի վաղ՝ 1922ին՝ ի պատասխան հայոց ցեղասպանութեան եղած մարդասիրական օժանդակութիւնը մնացել է անձանօթ:

Ամեն ինչ սկսուել է երբ ամերիկացի վերապատուելի դոկտոր Լինքըն Լ. Ուիրթը 1922 Փետրուարին ժամանել է Ճապոնիա: Նա կոչ է արել Տոկիոյում բնակուող ամերիկացիներին եւ եւրոպացիներին՝ օգնութեան ձեռք մեկնել հայերին: Ուիրթին յաջողուել է կազմել մի գլխաւոր յանձնախումբ՝ ամերիկացի գործարարներից, իսկ նրա նախագահ ընտրուել է ԱՄՆ դեսպան Չարլզ Բիչըր Ուորընը (1870-1936): Հայերին օգնելու շարժումը սկսել է թափ առնել, եւ Ճապոնիայում գործող տարբեր օտարերկրեայ հասարակայնութեան խմբեր, օթեակներ, եկեղեցիներ, ակումբներ հրաւիրել են Ուիրթին՝ ելոյթներ ունենալու: Հայերին օգնելու նրա կոչը տպագրուել է *Ջրփէն Էդվորթայզըր* անգլերէն թերթում եւ արտատպուել մի ճապոնական լրագրում, որտեղից էլ այդ մասին տեղեկացել են մի խումբ ազդեցիկ ճապոնացիներ: Նրանք դիմել են Ճապոնիայում երկար տարիներ աշխատող եւ հեղինակութիւն վայելող ամերիկացի քարոզիչ, վերապատուելի Գիլբըրթ Բոուլզին (1869-1960)՝ ասելով, որ հետաքրքրուած են Ուիրթի առաքելութեամբ: Վերջինիս Բոուլզը տարել է Կայսերական Դրամատուն, ծանօթացրել մի շարք գործարարների հետ, որոնց մէջ էր նաեւ առաջնակարգ դրամատէր եւ Արտաքին Գործերի փոխնախարար, դերկոմս Էիիծի Սիբուսաւան (1840-1931): Վերջինս հարցրել է Ուիրթին, թէ ովքե՞ր են հայերը եւ ինչո՞ւ նրանք օգնութեան կարիք ունեն: Որոշ աշխարհագրական եւ պատմական տեղեկութիւններ ստանալուց յետոյ Սիբուսաւան ընդհատել է Ուիրթին՝ ասելով. *«Ինչո՞ւ մեզ մօտ չէք բերել ձեր հայքը: Քանի որ մենք բուրդայական ենք, կարծում էք, որ չէ՞նք օգնի հայերին»*: Սիբուսաւան անձամբ Ուիրթին է տրամադրել 11,000 դոլարի չէք (այսօրուայ չափով՝ մօտ 140,000 դոլար) եւ ստանձնել տեղում կազմուած Ճապոնիայի Հայ Օգնութեան Յանձնախմբի նախագահութիւնը: Բոուլզը նշանակուել է

յանձնախմբի քարտուղար: Միբուսաւան անմիջապէս նամակ է յղել մօտ 100 ճապոնացի պատասխանատու անձանց՝ հայերին օգնելու գործում հետաքրքրութիւն ստեղծելու նպատակով: Այս հիմնադրամին սկսել են նուիրատուութիւններ գալ ճապոնական հասարակութեան բոլոր դասերից՝ հասարակ մարդկանցից մինչեւ կառավարական պաշտօնատարները, գլխաւոր գործարարներից մինչեւ կայսերական ընտանիքի անդամներ: Մի ճապոնական իգական դպրոց ստանձնում է երկու հայ որբի լրիւ պաշտպանութիւնը: Օգնութեան արշաւին է միացել արքայազն Տոկուգաւա Եոշիհիսան եւ պատկառելի գումար ուղարկել: Նա նաեւ կարելոր դեր է ունեցել Լորդերի Պալատի բոլոր անդամներին հայ օգնութեան հայտի վերաբերեալ գրականութիւն տրամադրելու գործում: Ուիրթը շարունակել է իր գործունէութիւնը՝ Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի մասնաճիւղեր բացելով նաեւ Չինաստանում, Կորէայում, Ֆիլիպիններում, Նոր Զելանդիայում եւ Աւստրալիայում: 15 այլ ազգային յանձնախմբերի հետ միասին ճապոնական յանձնախումբը անդամակցել է Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցին, որի գլխաւոր կենտրոնը եղել է Ժնևը: Յայտնի չէ, թէ որոշակի որքան գումար է հաւաքել ճապոնիայի յանձնախումբը, սակայն կարելոր է, որ ճապոնական հասարակութեան բոլոր խաւերն իրենց համակրանքն են արտայայտել հայ ժողովրդի ցեղասպանուած զաւակների հանդէպ եւ իւրաքանչիւրն իր հնարաւորութեան սահմաններում օգնել նրանց<sup>17</sup>:

Ուիրթի օգնութեամբ հայերին օժանդակող յանձնախումբ է ստեղծուել նաեւ Ֆիլիպիններում, որ ղեկավարել է Ֆիլիպինների ընդհանուր-նահանգապետ Լենըրդ Վուդը (1860-1927): Նրա խորհրդական գնդապետ Ֆրանք Ռոս Սքոյը (1874-1954) հանդիպումներ է կազմակերպել Ֆիլիպիններում եւ միջոցներ հաւաքել Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի համար: Ուիրթը վկայել է, որ Ֆիլիպիններում բնակուող ամերիկացիները եւ եւրոպացիները շոայլ նուիրատուութիւններ են կատարել, իսկ տեղացի ֆիլիպինցի ժողովուրդը դրամահաւաքին չնչին մասնակցութիւն է ունեցել<sup>18</sup>:

Նշենք նաեւ, որ հայ գաղթականների փոխադրման եւ տեղաւորման հարցերը 1923ին որոշ ժամանակ զբաղեցրել են Ֆրանսիայում ճապոնիայի դեսպան Կիկուձիրի Իշիիին (1866-1945), որի հետ Հայ Ազգային Պատուիրակութիւնը նամակագրութիւն է հաստատել այդ թեմայով<sup>19</sup>:

ԵՐԿՈՒ ԱՅԼ ԴՐՈՒԱԳ

1922ին Պեկինում կայացած Աշխարհի Ուսանողների Քրիստոնէական Դաշնութեան Համաժողովում հնչել է հայերի կոտորածների դատապարտման հարցը: Փոքր Ասիան ներկայացրել է

Զմիւռնիայի Ամերիկեան Քոլէջի պատմութեան եւ ընկերաբանութեան պրոֆեսոր Սեմուըլ Ռալֆ Հարլոուն (1885-1972): Ապրիլի 2ին Համաժողովը որոշում է կայացրել ի նպաստ Մերձաւոր Արեւելքի հալածուած ժողովուրդների, այդ թւում՝ հայերի. այն ստորագրել են 32 ազգերի ներկայացուցիչներ<sup>20</sup>:

1922ին, երբ քեմալականներն այրել են Զմիւռնիան՝ բնաջնջելով տեղի հայ եւ յոյն բնակիչներին, նաւահանգստում եղել է նաեւ մի նաւ՝ ճապոնացի նաւապետի հրամանատարութեան ներքոյ: Ի տարբերութիւն անգլիական, իտալական եւ ամերիկեան նաւերի պատասխանատուների, որոնք վանել են իրենց օգնութեան դիմած հայ եւ յոյն փախստականներին, ճապոնացի նաւապետն իր նաւի վրայ ապաստան է տուել մի շարք հալածեալների: Նոյնիսկ նաւի բեռները ծովն է նետել, որպէսզի կարողանայ աւելի օգտակար լինել դժբախտներին: Ի դէպ, այդ հայերի մէջ է եղել ամերիկահայ երգեհոնահար Պերճ Ժամկոչեանի հայրը<sup>21</sup>: Այս ճապոնացի նաւապետին 1935ին Ճապոնիայում հանդիպել եւ զրուցել է հայ քամանչահար Ռուբէն Կարախանեանը<sup>22</sup>:

ՅԵՏ ԳՐՈՒԹԵԱՆ. ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻԻՆԸ ԾԱՅՐԱԳՈՅՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Հայոց դէմ գործուած ցեղասպանութեան գիտական ուսումնասիրումը Ծայրագոյն Արեւելքի երկրներում համեմատաբար նոր ասպարէզ է: Զինաստանում Մեծ Եղեռնի վերաբերեալ աշխատութիւններ, որքան մեզ յայտնի է, առայժմ չկան: Եղած հատուկենտ օրինակները վերաբերում են Ճապոնիային եւ Կորեային:

Հայոց դէմ գործուած ցեղասպանութիւնն առաւել կամ պակաս չափով ներկայացուել է ճապոնացի հեղինակների՝ Հայաստանի մասին գրուած ճանաչողական գրքերում: Առաջիններից մէկը եղել է 1990ին Տոկիոյում հրատարակուած Հիդեհարու Նակաձիմայի *Հայաստան. Յոյսի Ակնթարթ Պատմութեան Մէջ* հատորը, որն ընդգրկում է հայոց համառօտ պատմութիւնը՝ սկզբից մինչեւ Մեծ Եղեռն: Նոյն հեղինակը տարիներ անց ճապոնացի ընթերցողին է ներկայացրել երկու այլ ճանաչողական հատոր՝ *Հայոց Գեղասպանութիւնը*, *Հայ Ժողովրդի Պատմութիւնն Ու Մշակոյթը* (2007) եւ *Ամէն Ինչ Հայաստանի Մասին՝ 65 Գլխով* (2009): 1991ին լոյս է տեսել Եուկիօ Ֆուձիմոյի *Ողբերգական Հայաստան* գիրքը, որտեղ տրուած է հայոց պատմութեան ընդհանուր ակնարկ եւ մասնաւորաբար շեշտուած է ցեղասպանութեան իրողութիւնը: Ճապոնացի ընթերցողին հայ ժողովրդին եւ Մեծ Եղեռնը լայնօրէն ծանօթացրել է Ֆրանց Վերֆելի *Մուսա Լեռան Քառասուն Օրը* վէպի ճապոներէն հրատարակութիւնը, որ գերմաներէնից թարգմանել եւ 1993ին հրատարակել է Եուկիօ Ֆուկուդան:

Նաև այս ոչ-գիտական հրատարակությունների շնորհիվ է հայոց դեմ գործուած ցեղասպանութեան վերաբերեալ որոշ հետաքրքրութիւն սկսուել Ճապոնիայի ակադեմական շրջանակներում:

Առաջին անգամ Ճապոնիայում հայոց դեմ գործուած ցեղասպանութիւնը բարձր ամբիոնից հնչեցրել է ականաւոր պատմաբան Վահագն Տատրեանը, որը ելոյթ է ունեցել 2003 Մարտին Հիրոսիմայում տեղի ունեցած ցեղասպանութիւններին նուիրուած գիտաժողովում: Մէկ տարի անց, 2004ին լոյս է տեսել Մեծ Եղեռնի մասին Ճապոներէն առաջին գիրքը՝ Աիժի Սանգիոյ Համալսարանի դեկան եւ իրաւունքի ուսուցչապետ Հիրոյոսի Սեգաւայի *Հայերի Մոռացուած Յեղասպանութիւնը. Հետազոտութիւն Յեղասպանութեան Յանցագործութիւնը Կանխարգելելու Եւ Պատժելու Վերաբերեալ* ծաւալուն ուսումնասիրութիւնը: Սեգաւան, որ 2002ից սկսած այցելում է Հայաստանի Հանրապետութիւն, Հայոց դեմ գործադրուած ցեղասպանութիւնն ուսումնասիրում է իրաւական տեսանկիւնից՝ փորձելով այդ տեսանկիւնից դատապարտել Ի. դարի սկզբին տեղի ունեցած ոճիրը: Սեգաւան առաջիններից էր Ճապոնիայում, որն արծարծեց 20րդ դարի սկզբին հայոց դեմ գործադրուած ցեղասպանութեան ճանաչման հարցը՝ համեմատելով այն հրէական Ողջակիզումի հետ: Աշխատութիւնը գրելիս Սեգաւան օգտուել է ոչ միայն հայկական, այլեւ ամերիկեան, անգլիական, գերմանական աղբիւրներից եւ հիմնուել բազմաթիւ վկայակոչումների վրայ: Գրքում զետեղուած են նաեւ քարտեզներ: Այս գրքի համար հեղինակն ընտրուել է Հումանիտար Գիտութիւնների Միջազգային Ակադեմիայի Հայկական Մասնաճիւղի իսկական անդամ: Աշխատութիւնը հայ գիտական մամուլի համար անգլերէնով գրախօսել է Ճապոնացի հեղինակ Ս. Աբէն<sup>23</sup>, իսկ 2005ին Երեւանում այն լոյս է տեսել հայերէն՝ Ճապոնագէտ Բանասէր Կարինէ Քարամեանի թարգմանութեամբ<sup>24</sup>:

2008ին Ճապոնիայում դարձեալ Հիրոյոսի Սեգաւայի նախաձեռնութեամբ լոյս է տեսել *Հայերի Յիշողութիւնները Յեղասպանութեան Վերաբերեալ (Նոր Դիրքորոշում)* խորագրով յօդուածների ժողովածուն: Նաև Սեգաւայի թարգմանութեամբ Ճապոներէն լոյս է տեսել ցեղասպանագէտ Նիկոլայ Յովհաննիսեանի *Հայոց Յեղասպանութիւնը* աշխատութիւնը, որն ընդգրկուել է պատմաբանի՝ 2009ին Երեւանում լոյս տեսած նոյն վերտառութիւնը կրող աշխատութեան տասլեզուեայ հրատարակութեան մէջ<sup>25</sup>:

Յովհաննիսեանի նշեալ աշխատութիւնը 2011ին լոյս է տեսել նաև կորէերէն: Թարգմանութիւնը կատարուել է անգլերէնից:

Վերջին տարիներին հայոց դեմ գործուած ցեղասպանութեան ուսումնասիրութեամբ զբաղում է նաև կորէացի պատմաբան Եանգսիգ Հան, որը 2005ին եւ 2014ին այցելել է ՀՀ եւ ցայժմ երկու յօդուած է

հրատարակել կորեական մամուլում Մեծ Եղեռնի մասին՝ «Ցեղասպանությունը Ցեղասպանություն է, Ճշմարտությունը՝ Ճշմարտություն» (*Հանկեռթե 21* (Մէկ ազգ 21), 1.11.2000, թիւ 337) եւ «Մի՛ Մոռացէք Հայաստանը» (նոյն, 3.08.2005, թիւ 571):

#### ԱՄՓՈՓՈՒՄ

Ինչպէս երեսաց սոյն հաղորդումից, հայոց դէմ գործուած ցեղասպանութեան իրողութիւնը որոշ չափով ծանօթ է եղել նաեւ հեռաւոր եւ տարաշխարհիկ նկատուող Ծայրագոյն Ասիայի երկրներում: Դրանցում եղած հայ համայնքները, նաեւ տեղի այլազգի բնակիչները նոյնպէս իրենց լուսման են ներդրել եղեռնից փրկուածներին օժանդակելու գործում: Սակայն, Հայոց եղեռնը դեռեւս մեծ մասամբ անծանօթ է մնում հսկայական բնակչութիւն եւ տարածաշրջանում կարեւոր կշիռ ու դերակատարութիւն ունեցող այդ երկրներում՝ չնայած խնդրի հանդէպ յատկապէս Ճապոնիայի գիտական շրջանակներում առկայ որոշ հետաքրքրութեանը: Վերջին տարիներին Ծայրագոյն Արեւելքի երկրների հետ ՀՀի եւ հայութեան կապերի սերտացումը ակնկալութիւն է ներշնչում, որ հայ ժողովրդի աւելի լայն ճանաչման հետ մէկտեղ այդ երկրներում կը բարձրանայ նաեւ իրազեկութիւնը հայոց դէմ գործուած ցեղասպանութեան վերաբերեալ:

2012ի Մայիսին Երեւան է այցելել Հարաւային Կորեայի խորհրդարանական պատուիրակութիւնը Ազգային ժողովի փոխխօսնակ Հոնգ Ջայ-Հեօնգի զլխաւորութեամբ: Վերջինս Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտում ասել է, որ կորեացի ժողովուրդը տեղեակ չէ Հայոց դէմ գործուած ցեղասպանութեանը, այնուամենայնիւ, պատուիրակութեան անդամ Նահ Եուն Մինը փորձել է ներկայացնել 1915ի իրադարձութիւններն իր «*Ժամանակակից Ողբերգութիւն*» գրքում<sup>26</sup>:

#### ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>1</sup> Vicken Babkenian, “Japan and the Armenian Genocide”, *The Armenian Weekly*, 29.09.2010. նոյնի՝ “The Forgotten Global Humanitarian Response to the Armenian Genocide: Cuba, China, Korea, Hawaii and Others Come to the Rescue”, *The Armenian Weekly*, 13.11.2010:

<sup>2</sup> Տե՛ս՝ մեր «Հայաստանի Մայրը. Ուրուագիծ Դիանա Աբգարի Կեանքի Եւ Գործունէութեան» յօդուածը՝ *Դիանա Աղաբէկ Աբգար. Կեանքը Եւ Գործունէութիւնը*, Նոր Ջուղայ, 2011, էջ 8-28:

<sup>3</sup> «Տիկին Տիանա Աբգար», *Ժողովուրդ*, 12.08.1919:

<sup>4</sup> P. Yoshio Saeki, *The Nestorian Monument in China*, London, Society for Promoting Christian Knowledge, 1916, էջ 61:

<sup>5</sup> «Ճարն, Թասֆիր Եւ Հայերը», *Վերջին Լուր*, 30.04.1919:

- <sup>6</sup> Ղարիբ, «Նամակ Ջալալ Կոզուց», *Մշակ*, 17.04.1916. նաև՝ «Օրինակելի Քայլեր», *Արձագանգ Փարիզի*, 25.05.1917, թիւ 4, էջ 7:
- <sup>7</sup> «Չինացիներն Ալ Կ'օգնեն Հայերու», *Ճակատամարտ*, 1.04.1919:
- <sup>8</sup> “What Shall Be Our Policy Toward Japan? [Editorial]”, *The Chinese Students' Monthly*. v.15 no. 3, 1920 January, էջ 7:
- <sup>9</sup> Եղիշէ Վարդանեան, *Անապատէ Անապատ: Շար. Վասպուրականի Նահանջ Բիւրոցին*, Վենետիկ, Մխիթարեան տպարան, 1923, էջ 418: Նուիրատուների ցանկը տե՛ս՝ նոյն, էջ 503-517 (բնագիրը տե՛ս՝ Հայաստանի Ազգային Արխիւ (ՀԱԱ), ՊՖՈնդ 430, ցուցակ 1, գործ 770):
- <sup>10</sup> Վարդանեան, էջ 513:
- <sup>11</sup> Նոյն, էջ 515-516: Հաւանաբար այս հանգանակութիւնը նկատի ունենալով է յիշատակուել, որ հայերին պատկանող չինական միքանի գործարաններ մեծ նուիրատուութիւններ են կատարել յօգուտ Մեծ Եղեռնից տուժած հայրենակիցների (Nadia H. Wright, *Respected Citizens: The History of Armenians in Singapore and Malaysia*, Melbourne, Amassia Publishing, 2003, էջ 77):
- <sup>12</sup> Վարդանեան:
- <sup>13</sup> Ասեա Դարբինեան, «Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց Կոմիտէի Մարդասիրական-Քարոզչական Քաղաքականութեան Առանձնայատկութիւնները (1915-1930 թթ.)», *Պատմաբանասիրական Հանդէս*, 2011, թիւ 2, էջ 57:
- <sup>14</sup> Babkenian, Cuba:
- <sup>15</sup> Տե՛ս՝ ՀԱԱ, ՊՈնդ 430, ցուցակ 1, գործ 1318, էջ 7:
- <sup>16</sup> Babkenian, Cuba:
- <sup>17</sup> Babkenian, Japan:
- <sup>18</sup> Babkenian, Cuba:
- <sup>19</sup> Տե՛ս այդ նամակագրութիւնը՝ ՀՀՊ Արխիւ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 1257:
- <sup>20</sup> «Արեւելքի Ջարդերու Մասին», *Ճակատամարտ*, 6.02.1922:
- <sup>21</sup> Տուեալը մեզ հաղորդել է Պերճ Ժամկոչեանին մօտիկից ճանաչած, Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի երբեմնի աշխատակից Արթուր Նաւասարդեանը (2011, Մարտի 10):
- <sup>22</sup> Յակոբ Մանուկեան, *Քեմանչիստ Ռուբէնի Յուշերը*, Պէյրութ, Հայ Տիպ Բոմփիւկրաֆ-Թեքնոփրէս, 1989, էջ 61:
- <sup>23</sup> Hiroyoshi Segawa, “The Forgotten Armenian Genocide: A Case Study of the Prevention and Punishment of Crimes of Genocide” (in Japanese), Sankeisha Press, Nagoya, Japan, 2004”, *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հտր. ԻԶ., Պէյրութ, 2006, էջ 371-373:
- <sup>24</sup> Հիրոյոսի Սեգաւա, *Հայերի Մոռացուած Յեղասպանութիւնը. Հետազօտութիւն Յեղասպանութեան Յանցագործութիւնը Կանխարգելելու Եւ Պատժելու Վերաբերեալ*, Երեւան, Նշանակ, 2005:
- <sup>25</sup> Տե՛ս՝ Nikolay Hovhannisyan, *The Armenian Genocide*, Yerevan, 2009, էջ 293-307:
- <sup>25</sup> Korean delegation visits Memorial to Armenian Genocide victims, <http://news.am/eng/news/105544.html> :

---

ECHOES OF THE ARMENIAN GENOCIDE IN FAR EAST COUNTRIES  
(SUMMARY)

ARTSVI BAKHCHINYAN  
arsvi@yahoo.com

The Armenian Genocide has had some echoes as far away as East Asian countries. Local Armenian communities have somehow raised awareness about what happened to the Armenian population in the Ottoman Empire. The writer and publicist Diana Apcar in particular wrote a series of articles, pamphlets and books about the Armenian genocide. We also found knowledge of the Armenian massacres in the testimonies of two Japanese, expressed in 1916 and 1919.

When the Near East Relief organization was founded in 1919, it also established branches in China, Korea and Japan. In 1920 the Committee of Armenian refugees of Mesopotamia sent an envoy to India and Far East countries for fundraising. The mission was successful due to donations by Armenian and non-Armenian donors from China, Hong Kong, Japan and Indonesia.

Nowadays there is a certain interest in the issue of the Armenian Genocide in academic circles of Japan and Korea. In particular, lawyer Hiroyoshi Segawa examines the juridical side of the Genocide in his studies.